# ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 29-ին գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։

Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թվականի նոյեմբերյան պլենումում,— ասաց նա,—ընկ. Յու. Վ. Անդրոպովը աշխատանքային բոլոր կոլեկտիվների, այդ թվում և գիտական կոլեկտիվների առջև խնդիր դրեց աշխատել ավելի մեծ կազմակերպվածությամբ ու նպատակասլացությամբ։ Դա ամբողջապես վերաբերում է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիային։

Առաջադրված նոր պահանջների լույսի ներքո ակադեմիայի բոլոր հիմնարկները այժմ վերակառուցում են իրենց աշխատանքը, միջոցներ ձեռնարկում գիտական մշակումների արդյունքներն ըստ ամենայնի օգտագործելու տնտեսական և սոցիալական պլանների իրականացման համար։

Վ. Համբարձումյանը բարձր գնահատեց այն աշխատանքը, որ իրականացնում են ակադեմիան, նրա ինստիտուտները հետազոտությունների արդյունքների ներդրման ուղղությամբ։

Կուսակցության կողմից առաջադրված պարենային ծրագրի հաջող իրականացումը, այնուհետև ասաց Վ. Հ. Համբարձումյանը, հրամայական պահանջում է որոշակի բեկում մտցնել մեր աշխատանքներում, գիտականորեն հիմնավորված մշակումներով ու հանձնարարականներով նպաստել գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմանը, ըստ ամենայնի աջակցել ագրոարդյունաբերական համալիրներին՝ կատարելու առաջադրված խնդիրները։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1982 թվականի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։ Նա ասաց, որ ակադեմիայի ինստիտուտները և մյուս ստորաբաժանումները զգալի ներդրում են կատարել ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական, հասարակական գիտությունների զարգացման գործում, հարստացնելով դրանք նոր արդյունքներով։ Գիտական հիմնարկները ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու համար առաջարկել են մի շարք մշակումներ։ Զեկուցման մեջ ցույց տրվեց գիտության և արտադրության կապի հետագա ամրապնդման, հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների զարգացման ուղղությամբ ակադեմիայի գործունեությունը։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն։ Ելույթ ունեցան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Գ. Ս. Սահակյանը, ակադեմիայի թղթակից անդամներ Պ. Մ. Գերունին, Ս. Հ. Մովսիսյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռ. Մ. Մարտիրոսյանը։ Տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պարգևների հանձնում ակադեմիայի մի խումբ աշխատակիցների։ Ակադեմիայի ընդհանուր ժողովում «Զորրորդային ամոնիումական միացությունների գործնական կիրառման հնարավորությունները» թեմայով զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Թ. Բաբայանը։

Ընդհանուր ժողովը պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար ընտրեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանին։

Այնուհետև ժողովը հաստատեց մի շարք գիտահետազոտական ինստիտուտների դիրեկտորների ընտրությունները, որոնք տեղի էին ունեցել ԳԱ համապատասխան բաժանմունքներում։

Նիստին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը։